

ՊԱՏՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ հմր. 40 Մճ.
Գաւառաց 2 խրա
Վեցամս. Կ. Պոլսոյ 3 Մճ.
Գաւառաց 1 խրա
Ստար երկիրներու 50 Ֆր.
Մանուկման տողը մէկ անգամի հա-
մար 3 զուրուշ, երկու անգամի հա-
մար 2 զրշ է. աւելի անգամներու
համար զատ սակարկութիւն կըլ-
այ :
Իւրաքանչիւր թիւ 40 փարա արծ :



ԼԵՐԱԳԻՐ

ՀԱՆԱՊԱՉՕՐԵԱՅ

ՊԱՏՄԱՆՔ

Դուրս գնացած լրագրաց ճանրու-
ծ ախբը խմբագրութեան վրայ է :
Լրագրոյս վերաբերեալ նամակ
կամ որ և ինչ գրութիւն խմբագր-
—Տնօրէնին պիտի ուղղուի, զարա-
միա Սանտքըքլար շահատէսի թիւ
198, Կօրօ խան, Մասիսի գրասեն-
եակը :
Հանրու ծախքը չիմարում նա-
մակ չընդունուիր :
Չտպուած նամակ, յօդուած, ևն
եւ չեն արտ իր :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿԱՅԱՆԴՆՈՒՊՈՒՄ 1 ՍԵՊՏԵՄԲԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Արեւելեան թումէրի վիճակը կը
ծանրանայ, և Ֆիլիսթորի լրագրիւն իւր
ամէն թուոց մէջ բռնութիւններ ու
սպանութիւններ կարճանագրէ Պուլ-
լարաց կողմէն թուրքաց վրայ ի դործ
դրուած : Անցեալները փիլիպէի մէջ
գիպուածով խաւամտուէ մը փոփոյը
սրուակ մը նետուելով Պուլլարի մը
գալչելուն համար, Պուլլար օտար-
կանք խեղճ խաւմին տունը մտան
բռնութեամբ և զինք դուրս քաշե-
լով օտարկանութեան կեդրոնը կը
տանկին :

Այս դէպքն իսրամաց և Պուլլա-
րաց միջև ծանր կռուոյ մը պատճառ
եղաւ, ուր առաջիններն անգէն լինե-
լով՝ զինեալ Պուլլարաց դէմ՝ իրենք
զիրենք պաշտպանելու պարտաւորե-
ցան : Երկու կողմէն վերաւորներ ե-
ղան և Պուլլար մը մեռաւ : Չորմա-
նալի է որ փիլիպէի Անգղիական ընդ-
հանուր հիւպատոսն իսրամաց վրայ
գործուած բռնութեանց վրայ քըն-
նութիւն ընելու հրահանգ արեւուե-
լով, պատասխաններ է թէ Եփրատըն
հովուական թուղթ մը գրեր է իւր
հօտն ի հանգարութիւն հրաւիրե-
լու համար, իւր թէ այսպիսի պարա-
գայից մէջ հովուական յորդորները
բաւական լինեն : Անգղիական հիւ-
պատոսն աւելի աղբու յանդիմանու-
թիւններ ալ ըրաւ թաթար-իսաղար-
ճը ուղեւորութենէ մ'ետեւ, ուր իս-
լամ սարսափի մէջ են : Պուլլարներ-
ըն իսրամաց ետ պահանջած կաշ-
ւածներն հրոյ ճարակ կընեն : Ինչ
ըրաւ Ալէքսօ վաշան ի պատասխանի
այս յանդիմանութեանց : հրաման-
ներ զրկեց թաթար-իսաղարճը պաշ-
տոնատարաց որ խիստ քննութիւն մը
ընեն : Այս պարզապէս իսթիլամի
դրութիւնն է, որոյ դէմ այնչափ ա-
նօգուտ կերպիւ բողոքած էր Հայոց
Պատրիարքարանն, և որ հիմա իս-
լամաց վրայ ի դործ կը դրուի Օսման-
եան դաւառի մը մէջ՝ Պուլլար վար-
չութեան մը կողմէն : Կըսուի թէ Բ-
Դուռն ալ Ռուսիոյ կառավարութեան
գիմելով խնդրեր է, որպէս զի Պուլ-
լարաց քով իւր աղբեցութիւնն ի
գործ դնէ իսրամաց վրայ գործուած
բռնութեանց վերջ տալու համար :
Գաւառի Բեդրապուրիի արքունիքն ալ
ճիշդ իսթիլամի դրութիւնն ի դործ
դնելով՝ իւր հիւպատոսներուն հրա-
հանգ տուեր է որ քննութիւն ընեն :
Այսպիսի քննութեանց արդիւնքը գ-
հացուցիչ չընար լինիլ, քանի որ ա-
նաչառ և արգար չլինի, ուստի և
իսրամաց անձնական և կալուածական
իրաւունքները շարունակ կը բռնա-
բարին Արեւելեան թումէրի և Պուլ-

լարիոյ մէջ : Կերեկ թէ Ալէքսօ փաշան
զգալով որ ծանր պատառնանաւոր
ութիւն կառուու իւր վրայ և անկա-
րող է բռնութիւններն արդելու,
հրաժարելու գիտաւորութիւն յայտ-
ներ է : բայց այս հրաժարումը կըր-
նայ գործն աւելի չլիթել, և եթէ
այս վիճակը շարունակի, Արեւելեան
թումէրի խաղաղութիւնը վերահաս-
տատելու համար դուրս Օսմանեան
զօրք մտցնել հարկ լինի, որ նոր դէպ-
քերու պատճառ կընայ տալ :

Հեղինակն ինդրոյն վրայ պատ-
ուիրակաց չորրորդ նիստը չորեք-
շաբթի օրը տեղի ունեցաւ : Այս
նիստն, ինչպէս երէկ ծանուցինք,
գարձեալ երկուստեք յայտարարու-
թիւններով անցաւ և ինդրոյն լու-
ծումը միշտ անստոյգ է : Կըսուի թէ
Հեղինակն պատուիրակներն իրենց կա-
ռավարութեան հրահանգ ինդրեր
են, որպէս զի սահմանաց ուղղութեան
ինդրոյն քննութեան մանեն, ի բաց
թողով վերացական վիճաբանութիւն
ներն, ինչպէս առաջարկած էին Օս-
մանեան պատուիրակը : Բայց առ-
այժմ սպասելու է մինչև որ ինդր-
աւելի պարզուի, այսինքն երևան ել-
նէ թէ արդեօք կարելի պիտի լինի
համաձայնութիւն հաստատել :

Անգղիական զօրքն ամենայն ա-
րագութեամբ Բեապլիլի վրայ կը քա-
լէ և տարակոյս չ'մնար որ պարտաւ-
որեալ պիտի պատէ որ և է կերպիւ :
Ուրիշ հատուածի մը մէջ Բեապլի-
լի եղբարական դէպքն նկատմամբ
քանի մը մանրամասնութիւններ կու-
տամբ՝ վերջին թղթերով և կամ
Անգղիական լրագրերէն քաղելով :
Բայց այնպիսի բարբարոս երկիրներու
մէջ գործը գելուրաւ չ'վերջանար, կա-
նոնաւոր կառավարութիւն մը կազ-
մել և հաշտութիւն կըքել անկարե-
լի կը լինի : Խնդրոյն լուծումը կընճ-
ռալից է, և չենք գիտեր թէ լրագ-
րի զօնաֆիլիս ինչպէս պիտի վերջացնէ
այս վիպասանական դրուագը : Միւս
կողմէն Ռուսը Թէքքէի թիւրքմէնները
նուաճելով Մէրվը գրաւելու կը ձեռ-
նարկեն, և կըսուի թէ Պարսկական
կառավարութիւնն ալ Ռուսիոյ դաշ-
նակցութեամբ Հերաթի պիտի տիրէ,
որոյ դէմ Թէհրանի Անգղիական դես-
պանը բողոքեր է : Կեդրոնական Ա-
սիոյ մէջ Ռուսիա և Անգղիա նախան-
ձընդդէմ աչօք կը զննեն իրարու
շարժումներն : Առ այժմ տակաւին
երկու կողման սահմաններն իրարմէ
բաւական հեռի են, բայց Անգղիա-
ցիք Բեապլիլ և Ռուսը Մէրվ առնը-
լով իրարու կը մերձենան : Անգղիա-
կան թերթեր կ'ըսեն որակայն թէ Աֆ-
ղանստանայ մէջ նոր երկրակալութիւն
չպիտի ընեն :

Լոնտոնայի մէջ անցեալ շաբաթ օ-
րըն Անգղիական լրագրաց իրիկուան
դէմ հանած թիւերն, որք երէկուան
թղթատարով առնուած են, Բեա-
պլիլի աղետալի դէպքն նկատմամբ
Անգղիա հասած առաջին լուրերը կը
պարունակեն : Այս լուրերն Անգղիոյ
հասարակութեան մէջ սաստիկ յու-
զում պատճառած էին, և ապստամ-
բութեան նշանակութեանը վրայ
կարծեաց անհամաձայնութիւն կար :
Դեռուրաւ կրնար երևակայուիլ թէ
Եփուրա կ'ան՝ վերջին Անգլո-Աֆղան
պատերազմին ժամանակ առած վոր-
ձառութենէն և Անգղիոյ հետ բա-
րեկամութեան համար ըրած առե-
րեղծ անկեղծ յայտարարութիւն-
ներէն յետոյ, կամովին Աֆղանները
զրգուած լինի անգամ մ'էս բարբարո-
սական խարէութեան և վատութեան
գործ մ'ընելու, ինչպէս որ 1842ին
ըրին՝ Բեապլիլի մէջ գտնուած 6000
Անգղիական զօրքը պաշարելով և յե-
տոյ Աֆղանստանայ միւս կողմըրը գրա-
նուած 13,000ի չափ Անգղիական զօ-
րաց հետ ջարդելով :

Աւելի հաւանական կը թուէր թէ
նոյն իսկ Եփուրա կ'ան՝ ապրի-
տամբութիւն մը ծագած է՝ առեւե-
րելով սա պատճառաւ թէ Անգղիա-
կան կառավարութեան չափազանց
զիջումներ ըրած էր, բայց ներքեւ-
պէս՝ դուրս Եփուրա կ'ան՝ տապա-
լելով անոր բաղմամբ և հակառակորդ-
ներէն մին Աֆղանստանայ դահու-
նայ նստեցնելու նպատակաւ : Վեր-
ջէն առնուած լուրեր ծանուցին թէ
ապստամբութիւնը քանի մը դուր-
Աֆղան զօրաց կողմէ հանուած էր,
որք իրենց ետ մնացած ամակապնե-
րը կը պահանջէին, և թէ Բեապլիլի
խաժամութիւն անվճարաց նոյն հետ
միացած և Անգղիական դեսպանա-
տան վրայ յարձակած էր, Այս դէպքն
օգոստ. 21 չորեքշաբթի օրը տեղի ու-
նեցաւ : Անգղիացոց բարեկամ Աֆ-
ղան ցեղէ մարդ մը փութով Ալի Խէյլ
գնաց և շնչապատու վիճակի մէջ ե-
ղելութիւնը ծանուց ինգղիացոց :

Այս մարդը Բեապլիլէն մեկնած
ժամանակ, Անգղիական դեսպան Սըր
Քալէքները և իւր հրամանաց ներքեւ
գտնուող անձինք սաստկապէս կը
պաշտպանէին իրենք զիրենք դեսպա-
նատան մէջ, որուն սակայն մէկ մա-
սին կրակ տուած էին Աֆղանք, և
լրագրերը շատ կը վախնար թէ դես-
պանատան բոլոր մարդիկն Աֆղանաց
կատաղութեան զոհ չըլտան : Դրժ-
բաղդաբար այս վախն իրականութիւն
դառն է : Չորեքշաբթի օրն Եփուրա
կան ինք ևս Ալի Խէյլ յատուկ նա-
մակներ զրկելով, եղելութիւնն Անգղի-
ացոց իմացուց : Էմիրը կը յայտնէր թէ
ապստամբեալ դուռներն, որոց հետ
միացած էր խուժանը, Բեապլիլի զի-
նարանին և կառավարական մթերա-

նոցներուն վրայ յարձակելով, ամեն
ինչ աւար առեր, և այն շէնքերը
քանդեր են : յետոյ խիստ մեծ բազ-
մութեամբ Անգղիական դեսպանա-
տան վրայ յարձակել են : Եփուրա
կան կը յայտարարէր թէ ինք բոլոր-
վին զարմացած էր այս շարժման վրայ,
և կը հանար խաղաղեցնել զայն : Տա-
վուտ Շահ անուն Աֆղան զօրավորը
դեսպանատան վրայ զրկեր է Անգղի-
այիներն ապստամբ, բայց ապստամբ-
ները զայն ձիէն վար տանելով աչ-
չափ հարուած եր են, որ մեռնելու վի-
ճակին հասեր է : Այն ժամանակ Եա-
դուրա կան իւր որդին Բեապլիլի կա-
ռավարին հետ Անգղիացոց օգնու-
թեան զրկեր է, բայց անհնար էր կա-
տաղի խուժանը մէկ կողմընել, ուստի
դեսպանատան վրայ եղած յարձակումն
ամբողջ չորեքշաբթի օրը տեւեր է :

Եփուրա կան հինգ շաբթի օրը
գարձեալ նամակ գրելով, կը յայտ-
նէր թէ ինք ևս խիստ նեղ վիճակի
մէջ էր, թէ ապստամբք զինք պաշա-
րած էին և չէր կրնար անոնց խօսք
հասկնել : Հեռագրիւն ետքէն այլեայլ
լուրեր բերեալ Եփուրա կանին նկատ-
մամբ : Ձրոյցի մը նայելով, ապստամ-
բաց կողմը բռներ է : ուրիշ զրոյց
մ'ալ կըսէ թէ դժբաղդ էմիրն ըս-
պաններ կամ ինքզինք սպաններ է :

Հնգկատանի փոխարքայ Լորա
Լիթթըն Բեապլիլի տղետալի դէպ-
քին լուրն առածին պէս, հեռագ-
րով հրաման զրկեց Ալի Խէյլ գնը-
ւող Անգղիացի հրամաւորին, որ իւր
արամադրութեան ներքեւ գտնուող
զօրքն առնու և անվճարաց Շուլթար-
կարտէնի կըճին վրայ քալէ : Ռօպերթ
զօրավորին ալ հրահանգ տրուեցաւ
որ փէյվարի կըրճն երթալով, ուղղակի
Բեապլիլի վրայ քալէ, մինչդեռ ըմ-
թիւքը զօրավորն ալ Բանտահարը
գրաւելու պիտի երթալ : Այս շար-
ժումներն արդէն փութով կը կատար-
ւէին, և Անգղիական զօրավոր մ'ալ
ձեւալապատի վրայ կըքալէր : Հնգկա-
տանի փոխարքայն ի հարկին Աֆղա-
նըստան գտնուող զօրաց օգնելու հա-
մար պահանջարկ զօրավորներ ալ կը
պատրաստէ, և որոշած է աղբուսպէս
յառաջ տանիլ զինուորական գործ-
ութիւնները :

Բեապլիլի Անգղիական դժբաղդ-
դեսպանին և իւր մարդոց մահուա-
նը նկատմամբ նոր լուրեր չկան, թէ
և այս տխուր դէպքն ինքնին ոչ ևս
տարակոյս կը վերցնէ : Ամենէն հա-
ւանականն այս լինիլ կը թուի թէ
Աֆղանք կրակ տուած էին Անգղիա-
կան դեսպանատան, և Սըր Քալէք-
ները և ուրիշ անգղիացի պաշտօնա-
տարք և 70ի չափ զինուորք չկրնար
կրակին դիմանալ, դեսպանատունէն
դուրս ելած են, և յայնժամ կատաղի
ամբողջ զիրենք շարաչար սպաննած
և յօշոտած է :

